ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

GOUVERNEMENT
D'ARMENIE OCCIDENTALE

BATI ERMENISTAN
HUKUMETI

ПРАВИТЕЛЬСТВО
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՁՆԱԳԻՐ

01.06.2011

Արեւմտյան Հայաստանի իրավաբանական հանձնախումբը փետրվարի 4-ից սկսած, Հռչակագրի ընդունումից հետո, նախապատրաստում եւ քննարկում է իրավական փաթեթներ, որոնք Արեւմտյան Հայաստանի կառավարության գործունեության եւ ձեւավորման համար խիստ կարեւոր են:

Ազգային Խորհրդի առաջարկությամբ իրավաբանական հանձնաժողովում քննարկվեց և ընդունվեց գործադիր մարմնի ստեղծման կանոնակարգի իրավաբանական հիմնադրույթները: Իրավաբանական հանձնաժողովի քննարկումների արդյունքում ընդունվեց Կառավարական համակարգի օրենսդրական փաթեթ, որը կազմված է 4 հիմնարար գլուխներից, որոնց միջոցով նախապատրաստված է կառավարության գործառույթները:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի ներքին գործերի հանձնաժողովը նախապատրաստել և հանձնել է Վտարանդի Կառավարությանը օրենսդրական փաթեթ՝ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիության ընդունման վերաբերյալ: Ընդունված փաթեթը հնարավորություն է տալիս բոլոր այն անձանց, ովքեր ցանկություն կունենան ընդունել Արեւմտյան Հայաստանի քաղաքացիություն, դիմել եւ լրացնել համապատասխան հարցաթերթիկ՝ ինչպես համացանցի միջոցով(online), այնպես էլ էլեկտրոնային տարբերակով:

Քաղաքացիության համար

http://www.western-armenia.eu/stat.gov.wa/arm/N.K.P/Kaghaqatsiutyun/Kaghaqatsiutyan-panatzev.htm

Անձնագրերի համար

http://www.western-armenia.eu/stat.gov.wa/arm/N.K.P/Andznaqir/Andznaqri-panatzev.htm

Քաղաքացիության մասին դիմումը կանցնի համապատասխան հանձնաժողովի իրավասությամբ: Քաղաքացիություն ստանալու դիմումները կքննարկվեն ներքին գործերի հանձնաժողովի կողմից , ելնելով քաղաքացիության մասին օրենսդրությունից: Այն անձանց դիմումները, որոնք կբավարարեն քաղա քացիության մասին օրենսդրության պահանջները՝ ըստ կանոնակարգի կստանան անձնագրեր և կդառնան Արևմտյան Հայաստանի քաղաքացիներ:

Դիմում տված քաղաքացուն, համաձայն դիմումի՝ կտրվի Արեւմտյան Հայաստանի քաղաքացիության անձնագիր: Քննարկվել և ընդունվել են նաեւ մի շարք այլ իրավական

փաթեթներ, որոնք հանրային ուշադրությանը կներկայացվեն առաջիկա մեկ ամսվա ընթացքում:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Մամլոյ Հաղորդագրութիւն

Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւն
http://www.western-armenia.eu/stat.gov.wa/index.htm
stat.gov.wa@haybachdban.org